Կ. ԵԶՅԱՆԻ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Հ. Ժ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կարապետ Եզյանը XIX դարի հայագիտության մեր նշանավոր հրախտավորներից էր։ Ծնվել է 1835 թ. սեպտեմբերի 5-ին, Մոսկվայում։ Միջնակարգ կրթությունը ստացել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում, որն ավարտել է ոսկե մեդալով։ Այնուհետև ուսանել է Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների բաժնում։ Համալսարանն ավարտելուց հետո նրան առաջարկում են ստանձնել հայոց լեզվի ամբիոնի վարիչի պաշտոնը։ Հիշյալ համալսարանում որոշ ժամանակ պաշտոնավարելուց հետո Եզյանը, սակայն, թողնում է համալսարանը և աշխատանքի անցնում Ռուսաստանի ներքին գործոց նախարարությունում, իսկ այնուհետև տեղափոխվում է լուսավորության նախարարություն։ Երկար ժամանակ Եզյանը վարում է լուսավորության նախարարության դեպարտամենտներից մեկի փոխտնօրենի պաշտոնը, նշանակվում նախարարության խորհրդի անդամ։ Իբրև արևելագետ նա անհայտ չէր Եվրոպայում։ Արևելագետների բազմաթիվ կարևոր միջազգային համաժողովներում Եզյանը Ռուսաստանի մշտական ներկայացուցիչն էր և հանդես էր գալիս գիտական զեկուցումներով։ Միաժամանակ նա ռուսական ու եվրոպական արևելագիտական մի շարք ընկերությունների անդամ էր։

Մեր պատմագիտության մեջ Կ. Եզյանը քիչ ուսումնասիրված հեղինակներից է։ Պետք է նկատել, որ Եզյանի «մոռացման» գործում քիչ դեր չեն խաղացել նաև որոշ պատմաբանների կողմից նրան տրված սխալ գնահատականները։ Ուստի նրա և ընդհանրապես ազգային-պահպանողական ուղղության մի շարք այլ ներկայացուցիչների աշխատություններն այսօր արդեն արժանի են հատուկ ուսումնասիրության և վերագնահատման։

Կ. Եզյանի առաջին լուրջ ուսումնասիրությունը «Հին Հայաստանի ներքին կյանքը» աշխատությունն էր, որի համար նա արժանացավ արևելյան բանասիրության մագիստրոսի աստիճանի։ Գիրքը տպագրվել է Պետերբուրգում՝ 1859 թ. և թեպետ այն ներկայացված էր բանասիրության զծով մագիստրոսի աստիճանի, աշխատությունն ամբողջությամբ պատմագիտական ուսումնասիրություն է։ Հեղինակը քննարկում է հին Հայաստանի պատմությանը վերաբերող կարևոր շատ հարցեր, ընդ որում նախապատվությունը տալիս է Մովսես Խորենացու հաղորդած տեղեկություններին։ Միաժամանակ նկատելի է հեղինակի ինքուրույնությունը օտար աղբյուրների գնահատման հարցում։ Մի կողմից նա ընդունում է հունա-հռոմեական պատմիչների հայտնած տեղեկությունների կարևորությունը, իսկ մյուս կողմից ընդգծում է հայոց պատմությունն իրենց քաղաքական շահերին հարմարեցնելու նրանց միտումը։ Հարկավ ճշմարիտ է Եզյանը, երբ ներածականում գրում է, թե «հույները սովորություն ունեին հունական ծագում վերագրել հին աշխարհի համարյա բոլոր ժողովուրդների նահապետներին»[1]։

Աշխատությունում Եզյանը քննարկում է այն կարևոր հարցը, թե ինչու Հայաստանն իր զարգացմամբ չհասավ Հունաստանին և բերում է ուշագրավ մի քանի փաստարկներ։ Դրանցից առաջինը նա համարում է Հայաստանի

---

1 Տե՛ս Г. Эзов. Внутренний быт древней Армении. СПб., 1859, с. 2.

աշխարհագրական դիրքը, «որտեղ մշտապես տեղի են ունեցել Արևմուտքի և Արևելքի բախումներ, ուստի ազգային ամեն տեսակ զարգացում ենթարկվում էր երկու հակադարձ ուժերի ազդեցությանը, որոնք եթե չէին ճնշում նրան, ապա ծայրահեղ դեպքում կասեցնում էին նրա զարգացումը»[2]: Հաջորդ պատճառը Եզյանը տեսնում է «նախարարների անմիաբանության մեջ, որոնք թշնամաբար էին տրամադրված մեկը մյուսի նկատմամբ»[3]: Ուշագրավ է նաև մյուս պատճառը, որը նախորդի տրամաբանական շարունակությունն է. Եզյանն այն բացատրում է Հայաստանի քաղաքական ներքին կառուցվածքով. «Միապետական կարգը,—գրում է նա,—Հայաստանում այդպես էլ չստացավ իր լրիվ զարգացումը. թագավորական իշխանությունը սահմանափակված էր կաթողիկոսի և նախարարական իշխանությամբ»[4]: Հեղինակն, անշուշտ, իրավացի է իր այս խորհրդածություններում: Պետք է ընդունել այն ճշմարտությունը, որ Հայաստանում թագավոր-նախարարներ դաշինքն այդպես էլ չստեղծվեց ու չամրացավ. «Նախարարները խանգարել են ուժեղ թագավորական իշխանությանը, և երբ թշնամիները բոլոր կողմերից սլանում էին Հայաստան, թվական գերակշռությունը մշտապես նրանց կողմն է եղել... Նախարարների մեղքով հայերը երբեք չեն ճակատամարտել մեծ զանգվածներով»[5]: Եզյանը, ցավոք, չի զարգացնում իր միտքը և երևույթը չի մեկնաբանում, սակայն միաժամանակ ընդգծում է նախարարական տների խաղացած դրական դերը հայոց պետականության կայացման խնդրում. «Քաղաքական այս կառուցվածքը,—գրում է նա,—պայմանավորում և բացահայտում է Հայաստանի քաղաքական կյանքի գլխավոր երևույթները»[6]:

Եզյանը ընդգծում է եկեղեցու խաղացած կարևոր դերը հայոց պատմության և ընդհանրապես, հայ ժողովրդի կյանքում: «Քրիստոնեական եկեղեցին,—գրում է նա,—մեծ նշանակություն է ունեցել հայերի կյանքում: Եթե հայերը մինչև օրս գոյություն ունեն որպես առանձին ժողովուրդ, ապա դրանում նրանք մեծապես պարտական են իրենց եկեղեցուն: Եկեղեցին հայերին փրկեց իր հզոր հարևան պետությունների նյութական և բարոյական հարբստահարումից, դրանով իսկ կանխելով ձուլումը նրանցից որևէ մեկի հետ և սկիզբ դրեց ազգային առաջընթացին»[7]:

Գրքում այնուհետև առանձին ենթավերնագրերով ներկայացված են թագավորական իշխանությունը, իշխանության ժառանգականությունը, պետական դրոշը, լեզուն, թագավորական տիտղոսները, թագավորական հանդիսությունները, արքունիքը, գործակալությունները, բանակը: Առանձին բաժիններով քննարկվում են հարևան տերությունների՝ Պարսկաստանի, Բյուզանդիայի, Աղվանքի և մյուս երկրների հետ Հայաստանի ունեցած հարաբերությունները: Հեղինակը անդրադարձ է կատարում նաև եկեղեցու և թագավորի հարաբերություններին, տնտեսությանը, առևտրին, դրամահատությանը, այսինքն՝ այն բոլոր հարցերին, որոնք ամբողջական ձևով ներկայացնում են հին Հայաստանի ներքին կյանքը: Այս աշխատությունը, անշուշտ, ժամանակին կարևոր ներդրում էր հայագիտության մեջ:

Եզյանն իր դարաշրջանի հզոր անհատականություններից էր, չկար ժամանակի առավել կամ պակաս հուզող հարց, որը նրա կողմից հատուկ ուսումնասիրության չարժանանար: 1884 թ. Պետերբուրգում լույս տեսավ Կ. Եզյանի «Բոնի միութիւն հայոց Լեհաստանի ընդ եկեղեցիոյն Հռովմայ» աշխատությունը: Գրքի ներածականում վկայակոչելով պատմիչ Առաքել Դավրիժեցու պատմության համապատասխան դրվագներն ... Եվրոպացի բարո-

2 Նույն տեղում, էջ 26:
3 Նույն տեղում, էջ 132:
4 Նույն տեղում, էջ 27:
5 Նույն տեղում, էջ 95:
6 Նույն տեղում, էջ 96:
7 Նույն տեղում, էջ 37:

գիչների թարգմանությունները, Եզյանը նշում էր, որ հայ ժողովուրդն իր պատմական ժամանակներից սկսած, մշտապես նվիրված է եղել միասնական պետության գաղափարին։ «Որ ոք ուշի ուշով հետազօտեսցէ զյիշատակարանս պատմութեանց ազգիս մերոյ, նշմարէ, ապաքէն զայս ինչ երևոյթ նշանաւոր, մասամբ իսկ բացահայտիչ պատմական անցից աշխարհին, զի ըստ յոլով երկարութիւն ժամանակի պատմութեան նորա չերևի ուրեք ձըգտումն ի հայս կազմելոյ պետութիւն միաւորեալ և անկախ...»[8]։

Մտահոգված լեհահայերի ազգապահպանության խնդրով, գրքում նա պատմական էքսկուրսներ է կատարում, ցույց տալով, թե ինչպիսի անդառնալի հետևանքների հանգեցրին ժամանակին հայոց թագավորի ու նախարարների միջև ծագած հակասությունները, որի արդյունքում «ի վերջ կոյս Դ-ի դարուն բաժանեցաւ աշխարհն հայոց ի մէջ երկոցունց պետութեանցս այսոցիկ, անկեալ ի բաժնին Պարսից իւր թագաւորն»[9]։

Ըստ այսմ, պատմական բազում իրավիճակներ վկայակոչելով, Եզյանը գալիս է իր ուսումնասիրության հիմնական գաղափարին. Հեղինակը դատապարտում է լեհահայերի և նրանց առաջնորդ Նիկոլ եպիսկոպոսի կողմից դավանափոխության իրողությունը, որի հետևանքով շատ հայեր ձուլվեցին և կորցրեցին իրենց ազգային նկարագիրը։

1891 թ. Պետերբուրգում լույս տեսավ ֆրանսիացի Հովհաննես Դարդելի ժամանակագրությունը Կ. Եզյանի ընդարձակ առաջաբանով։ Այն ամբողջովին նվիրված է Կիլիկյան Հայաստանի պատմությանը։ Վկայակոչելով տասնյակ հայտնի հայ պատմիչների և օտարազգի հեղինակների հաղորդած տեղեկությունները, Եզյանը հանգամանորեն և մանրամասն անդրադառնում է Կիլիկյան Հայաստանի պատմության գլխավոր անցքերին, քննական վերլուծության ենթարկում դրանք։

Ներկայացնելով Կիլիկիայում բնակվող ժողովուրդներին, նա նշում է, որ շատերը՝ հատկապես ասորիները, շուտով կորցրեցին իրենց լեզուն և ազգային նկարագիրը։ «Հայերը,— ընդգծում է Եզյանը,— անասելի եռանդով կարողացան պահպանել հույների և արաբների ազդեցությունից ոչ միայն իրենց կրոնը, այլև իրենց լեզուն և ազգային բարքն ու սովորությունները։ Շատ բան ընդունելով արաբական հարուստ մշակույթից, միևնույն ժամանակ նրանք չափազանց հակամետ էին եվրոպական քաղաքակրթությանը, որը սկսել էր մուտք գործել խաչակիրների հետ միասին... Լեռներու մեջ ամրացած, նրանք պահպանում են իրենց նախնյաց դավանությունը և սովորությունները... Հայերը պահպանեցին իրենց անկախությունը՝ պաշտպանելով միևնույն ժամանակ ամբողջ քրիստոնեության շահերը արևելքում նաև այն ժամանակ, երբ ֆրանկների հիմնած իշխանությունների հետքն անգամ չէր մնացել այդ երկրում»[10]։

Առաջաբանի վերջում Եզյանը երկու խոսքով ներկայացնում է Հովհաննես Դարդելին, որը Կիլիկիո վերջին թագավոր Լևոն VI քարտուղարն էր և նրա խնդրանքով գրեց Կիլիկիայի պատմությունը։

1886 թ. Կ. Պոլսի Խորեն արքեպիսկոպոս Նար-Պեյը հանձն առավ Դարդելի ժամանակագրության հայերեն թարգմանությունը, թեև այստեղ էլ հարկ եղավ հաղթահարել մեծ դժվարություններ. «Ամբողջ տարի հարկավոր եղավ գործ գնել ազատելու համար այդ թերթերը տաճկական գրաքննության ձեռքից, որը դատապարտել էր նորան այրելու։ Տաճկական գրաքննիչները գտել էին, որ Դարդելի ժամանակագրությունը մեծ վտանգ է սպառնում օսմանյան մեծահզոր պետությանը...»[11]։

---

8 Տե՛ս Կ. Եզյան. Բռնի միութիւն հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռոմայ. Ս. Պետերբուրգ, 1884, էջ Է։

9 Նույն տեղում, էջ Ը։

10 Տե՛ս Հովհաննես Դարդելի ժամանակագրութիւն հայոց Ս. Պետերբուրգ, 1891, էջ ԺԲ։

11 Նույն տեղում, էջ ՀԲ։

Հետաքրքիր այս առաջաբանին նախորդել էր մեր նշանավոր պատմիչ Ղևոնդի պատմության մասին գրած մեկ այլ ընդարձակ առաջաբան, որը լույս տեսավ Ս. Պետերբուրգում 1887 թ.[12]: Եզյանը, ընդգծելով Ղևոնդի պատմության ուսումնասիրության նշանակությունն ու միջնադարհայագրական լայն ընդգրկումը, բարձր է գնահատում նաև նրա նշանակությունը արաբական տիրապետության ժամանակների պատմության լուսաբանման խնդրում, ամենից առաջ ընդգծելով նրա հավաստիությունը: Ընդ որում, քննարկելով Ղևոնդի պատմության դրվագները, Եզյանը չի բավականանում այդ պատմության պարզ վերարտադրումով, այլ պատմիչի տեղեկությունները համեմատում է մեր մյուս պատմիչների հաղորդած տեղեկությունների հետ: Եզյանը հանգամանորեն քննարկում և վերլուծում է նաև արաբական տիրապետության շրջանի Հայաստանի ներքին կյանքը:

Կ. Եզյանի ուշագրավ հրատարակություններից էր նաև «Ս. Էջմիածնի Մայր աթոռի և ռուսաց կառավարության հարաբերությունների ծագումը» աշխատությունը, որտեղ հեղինակը պատմական ակնարկի տեսքով ցույց է տալիս Հայոց Մայր աթոռի և Ռուսաստանի կառավարության հարաբերությունները Եկատերինա II կայսրուհու ժամանակներից սկսած:

Գրքույկի հրապարակման գլխավոր նպատակը Եզյանը տեսնում էր հայ-ռուսական հարաբերությունների պատմության կարևորագույն դեպքերը վերհանելու և այդ կապերը խորացնելու ու զարգացնելու մեջ, որը, մեր կարծիքով, զուրկ չէ նաև արդիական հնչեղությունից. «Յուր հայրենիքին լավություն կամեցող յուրաքանչյուր քաղաքացու... սուրբ պարտքն է վառ պահել այդ զգացումները և նպաստել դրանց զարգացմանը. բարի ծառայություն անող չեն նրանք, որոնք թուլացնում են այդ բարոյական շաղկապներն ու փոխադարձ անվստահություն գցգռում այնտեղ, ուր դրա համար բնավ պատմական հիմք չկա: Անցյալի ծանոթությունը վերացնում է միջանկից թյուրիմացության առիթներն ու փոխադարձ համակրանքի և հարգանքի բաքի զգացումներ առաջ բերում»[13]:

XIX դարի վերջին սկսվում է Եզյանի հայագիտական գործունեության առավել հասուն և արդասավոր շրջանը: Այդ ընթացքում լույս անդաշարժներ են կատարվել հայագիտության բնագավառում, ի հայտ էին եկել պատմագիտական նոր ուսումնասիրություններ: Եզյանը ձեռնամուխ է լինում տասնամյակների մտորումներն ու մտահղացումները ընդհանրացնելու խնդրի իրականացմանը: Հենվելով տղբյուրագիտական հարուստ նյութի վրա, նա ստեղծում է մի նոր ու արժեքավոր աշխատություն: 1898 թ. Պետերբուրգում լույս տեսավ Կ. Եզյանի «Պետրոս Մեծի հարաբերությունները հայ ժողովրդի հետ» ծանրակշիռ ուսումնասիրությունը: Մինչև այդ աշխատությունը քննարկվել էր Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի պատմաբանասիրական բաժանմունքում և երաշխավորվել հրատարակության: Աշխատությունը հիմնականում իրենից ներկայացնում է փաստաթղթերի ժողովածու, որոնք հեղինակը քաղել է տարբեր դիվանատներից՝ Մոսկվայի գլխավոր և Պետերբուրգի Արտաքին գործերի նախարարության, Ավստրիայի արքունական և պետական, Բավարիայի թագավորական պետական արխիվներից: Գրքի համար Եզյանը բնաբան է ընտրել Պետրոս Մեծի հայտնի խոսքերը. «...Քանզի մենք հայ ժողովրդին կայսերական մեր հատուկ ողորմածությանն ու հովանավորությանն ընդունեցինք»[14].

Աշխատության առաջին մասը Եզյանի ընդարձակ ներածական ուսումնասիրությունն է՝ «Ակնարկ Ռուսաստանի կառավարության և հայ ժողո-

---

12 Տե՛ս Պատմութիւն Ղեւոնդեայ մեծի վարդապետի հայոց. Ս. Պետերբուրգ, 1887։

13 Տե՛ս Կ. Եզյան. Ս. Էջմիածնի Մայր աթոռի և ռուսաց կառավարության հարաբերությունների ծագումը. Թիֆլիս, 1901, էջ 42։

14 Տե՛ս Г. Эзов. Сношения Петра Великого с армянским народом, СПб., 1898 (այսուհետև՝ էջը տողամիջում)։

վորդի հարաբերությունների մասին» խորագրով: Հրատարակությանն անծանոթ ընթերցողին կարող է թվալ, թե բնագրերին կցված են մեր ներկա հասկացությամբ սովորական ներածական և ծանոթագրություն: Իրականում, հեղինակի ներածությունը զբաղեցնում է գրքի կարևոր մասը և ծավալուն ուսումնասիրության բնույթ ունի:

Միաժամանակ Եզյանը գտնում է, որ նպատակահարմար չէ Պետրոս I-ի ողջ գործունեությանը անդրադառնալը, ուստի իր խնդիրն է համարել ուսումնասիրել նրա արևելյան քաղաքականությանը վերաբերող փաստաթղթերը: Նա գտնում էր, որ դեպի Արևելք կատարած իր արշավանքներում Պետրոսը հետապնդում էր «ոչ միայն քաղաքական և առևտրաարդյունաբերական, այլ նաև բարոյամշակութային նպատակներ՝ ազատագրել քրիստոնյա ժողովուրդներին, որոնք գտնվում են ստրկության և հարստահարման մեջ» (էջ II): Եզյանն առաջինը գնահատեց բարոյամշակութային կապերի շահեկան առավելությունները, ինչը կհանգեցներ այդ ժողովուրդների միավորմանը Ռուսաստանի ժողովուրդների հետ: Մեր պատմագրության մեջ տարածված տեսակետ է, թե դեպի Կովկաս ձեռնարկված արշավանքներն ու պատերազմները միայն կապվել են ռուսական ցարիզմի քաղաքական և առևտրական նկրտումների հետ, իսկ ազատագրական կողմը համարել են արշավանքների իրական շահերի և ձգտումների քողարկում: Ելնելով այսօրվա չափանիշներից, պետք է նկատել, սակայն, որ այդ ջանքերն ունեցել են որոշակի նպատակաուղղվածություն: Ուստի ընդունելով առաջինը, չի կարելի լիովին բացառել նաև Անշուշտ, ռուսական կայսրության սահմանների ընդարձակումը համընկնում էր Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական ձգտումներին, որոնք ջանում էին թոթափել թուրք-պարսկական ծանր լուծը:

Պատմագիտական առումով առավել մեծ արժեք է ներկայացնում Եզյանի՝ կասպիական արշավանքի պատմությանը նվիրված բաժինը: Նկարագրելով կասպիական արշավանքի նախապատրաստությունը, նրա ընթացքն ու հետագա իրադարձությունները, նա ընդգծում է ռուսական արքունիքի հետևյալ նկատառումները. «1. Կասպից ծովն իր վրա էր սևեռում Պետրոսի հատուկ ուշադրությունը. հաղորդակցություն հաստատել Կասպից ծովի և Հնդկաստանի միջև, Ռուսաստանի միջոցով ճանապարհ բացել եվրոպական առևտրի համար դեպի Հնդկաստան» (էջ LXXI):

«2. Պետրոս Մեծը, նպատակ ունենալով Ռուսաստանին ամրացնել Մերձկասպյան մարզերը, լավ հասկանում էր, որ այդ երկրների մուսուլմանական բնակչությունը չի համագործակցի իրենց հետ» (էջ LXXIII), ուստի ռուսական կայսրը փութաջանորեն և համառությամբ ձգտում էր թուլացնել մահմեդական տարրը և փոխարինել այն քրիստոնեականով: Այդ խնդրում լավագույն միջոցը նա համարում էր «այդ մարզերում քրիստոնեական բնակչության ուժեղացումը և ուղղակիորեն մատնացույց էր անում հայերին» (ն. տ.): Արդյո՞ք այստեղ Եզյանը մեզ չի՞ մղում հանգելու մի կարևոր մտքի՝ Պետրոս Մեծի համար առաջին պլանում եղել է ոչ թե Հայաստանի ազատագրումը, այլ «կասպիական մարզերը հայերով բնակեցնելը» (ն. տ.):

Եզյանի բերած փաստերը մեզ համոզում են և որոշ առումով նույնիսկ բացատրում կասպիական արշավանքի դադարեցման հանգամանքները: Կարծում ենք, որ Կ. Եզյանի մտքերն այս կապակցությամբ բավականին ուշագրավ են: Ճիշտ է, նա այդ մասին ուղղակի չի գրում, բայց անուղղակի հիմնավորումը տալիս է: Այսպես, խոսելով կասպիական մարզերում հայերի ծավալած առևտրական շահավետ գործունեության մասին, նա ավելացնում է. «Առևտրական այդ շրջապտույտից ստանալով զգալի շահ ռուսական կառավարությունն առավել շահագրգռված էր, որպեսզի պարսկական ողջ մետաքսը հոսի դեպի Ռուսաստան, քանի որ հումքի առևտուրը կենտրոնացված էր հայերի ձեռքում» (ն. տ.): Եզյանը նույնիսկ հիշատակում է հայ ձեռներեց Մանվել Խախանյանին, որը մետաքսի ողջ գործառությունը կենտրոնացրել էր իր ձեռքում և «ստեղծել էր մի ընկերություն հիմնված ակցիաների

վրա և որը, կարծես, առաջինն էր Ռուսաստանում» (ն. տ.)։ Հաջորդ կարևոր պահը. Պետրոս Մեծը, ձգտելով Ռուսաստանին ամրացնել Ներքկասպյան սարզերը, քաջ գիտակցում էր, որ այդ երկրների մուսուլմանական բնակչությունը չի կարող «համաձայնվել քրիստոնեական կերիշխանության տետ» (ս. տ.) (Օզյանի բնութագրումն է—Հ. Հ.), ուստի հայերին սատնացույց անելը միանգամայն կշռադատված էր և արդարամիտ։ Օզյանն ընդգծում է նաև 1724 թ. մայիսին գեներալ Մատյուշկինին ուղղված պետության պատգամը. «Ամեն գնով աշխատել հայերին կոչ անել, եթե կան Դիլանում և Սաղանդարանում, և բնակեցնել...» (ն. տ.)։ Կարծում ենք, որ Օզյանի այս եզրահանգումները նույնիսկ բավական են ենթադրելու, որ Պետրոս Մեծը, այսուհանդերձ, կասպիական արշավանքի գլխավոր նպատակը, եթե ոչ ամբողջությամբ, ապա կիսով չափ կատարել էր։

Թնպետ Օզյանի աշխատությունը վերնագրված է «Պետրոս Մեծի հարաբերությունները հայ ժողովրդի հետ», սակայն հեղինակն այդ ժամանակաշրջանը շարունակում է և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունը հասցնում մինչև XIX դարի վերջը։

Գրքի ներածականում հեղինակը անդրադառնում է նաև XIX դարի առաջին երեսնամյակում տեղի ունեցած կովկասյան պատերազմներին. Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացման խնդրին. «Դիտակցելով, որ սկսված պարսկական պատերազմում (1826—1828 թթ.) վճռվելու էր հայերի բախտը,—գրում է Օզյանը,—որ այդ պատերազմի ելքից է կախված նրանց փայփայած երազանքի իրականացումը՝ մուսուլմանական լծից ազատագրումը, հայերը նրանում ունեցան գործուն մասնակցություն և չխնայելով իրենց ունեցվածքը, ոչ էլ կյանքը, բոլոր ուժերով համագործակցեցին ռուսական զենքի հաղթանակին» (էջ CXXI)։ Օզյանը բերում է նաև գեներալ Երմոլովի 1826 թ. սեպտեմբերի 17-ի զեկուցագիրը Կարսարազում ռազմական գործողություններին հայերի ակտիվ մասնակցության մասին։ Իր ակնարկի քսանմեկերորդ բաժնում ևս նա ընդգծում է 1828—29 թթ. ռուս-թուրքական պատերազմին հայերի գործուն մասնակցությունը։ «Մինչ այդ սկիզբ առավ պատերազմը Թուրքիայի հետ։ Մեր բանակների շարժման ժամանակ հայերն ամենուր ցնծությամբ էին դիմավորում ռուսական բանակներին և չէին խնայում իրենց կայքը և իրենց կյանքը» (ն. տ.)։

Հեղինակն, անշուշտ, իր ակնարկում զգալի տեղ է հատկացնում Ներսես Աշտարակեցու գործունեությանը, որին համարում էր «XIX դարի սկզբին Անդրկովկասի առավել նշանավոր և բացառիկ դեմքերից մեկը... հայերի կազմակերպիչ և ղեկավար» (էջ CXXII)։ Օզյանի մոտ ամենից հաջող և հանգամանալից է ներկայացված Աշտարակեցու գործունեությունը կովկասյան պատերազմներում։ Պարզենք մեր ասելիքը։ Հայագիտության մեջ, առանձնապես խորհրդահայ պատմաբանների աշխատանքներում, Ներսես Աշտարակեցին հիշատակվում է գերազանցապես ռուս-պարսկական երկրորդ պատերազմի և կամավորական ջոկատների կազմակերպման առումով։ Նրա գործունեության կարևոր շատ այլ մանրամասներ փաստորեն դուրս են մնացել մեր պատմաբանների ուշադրությունից։ Մինչդեռ Օզյանն իր աշխատանքում հետաքրքիր և կարևոր փաստեր է հաղորդում Ներսես Աշտարակեցու հայանպաստ այլ գործերի, մասնավորապես 1804—1813 թթ. ռուս-պարսկական պատերազմին նրա ակտիվ մասնակցության մասին։ Բերենք մի քանի քաղվածք. «Ելիզավետպոլի տակ նա (Ներսես Աշտարակեցին—Հ. Հ.) գտնվում էր իշխան Ցիցիանովի զորքի մեջ,—գրում է Օզյանը,—և հայ բնակչության վրա ունեցած ազդեցությամբ նպաստեց ռուսական բանակի հաղթանակին...։ ...Երևանի տակ ռուսական բանակը գտնվում էր ծայր աստիճան դժվարին կացության մեջ՝ հացի, ռազմամթերքի և այլ պահանջների անբավարարության պատճառով։ Ներսեսը էջմիածնից Երևան հասցրեց 12 հազար փութ հաց և ալյուր, 25 փութ վառոդ և ամեն հնարավորն արեց այդ վիճակից բարեհաջող դուրս գալու համար» (էջ CXXIII)։ Այս փաստը հետա-

գայում հաստատվում է նաև Ներսես Աշտարակեցու՝ պետքարտուղար Բլուդովին ուղղված նամակում. «Ինձ բախտ է վիճակվել լինել Ցիցիանովի բանակում, ամենուր և ամեն հարցում եռանդորեն համագործակցել նրա հետ»— գրում էր Աշտարակեցին (էջ CXXV): «Ներսես Աշտարակեցու այս գործունեությունը չվրիպեց պարսկական կառավարության ուշադրությունից,—շարունակում է Կ. Եզյանը: Նրանք ծայր աստիճան անհանգստացած «մեկ սիրաշահում էին նրան և կուրացնում ամեն տեսակ շնորհներով, մեկ բանտարկում նրան և սպառնում մահապատժով» (Ն. տ.):

Եզյանը հանգամանորեն անդրադառնում և հաջողությամբ լուծում է նաև այնպիսի կնճռոտ մի հարց, ինչպիսին Պասկևիչ և Ներսես Աշտարակեցի հանգույցն էր: Բանն այն է, որ Ն. Աշտարակեցի—Պասկևիչ հանգուցահարցն արդեն դուրս էր եկել անձնական հարաբերությունների ոլորտից և ձեռք բերել քաղաքական հստակ դրսևորում: Մինչ այդ ռուսական պաշտոնական պատմագրության որոշ շրջանակներում հարցը քննարկվում էր խիստ միակողմանի դիրքերից, հրապարակումներում մեծ մասամբ պաշտպանության տակ էր առնվում վերջինս, իսկ Շչերբատովի՝ Պասկևիչին նվիրված աշխատությունից հետո, ուղղակի աղավաղվել էր Աշտարակեցու կերպարը: Ահա, այդ պայմաններում Կ. Եզյանը համարձակորեն ներկայացնում է Պասկևիչի իրական բնութագիրը: Համարձակորեն, քանի որ նա առաջինը ռուս ընթերցողին մանրամասն և հանգամանորեն ներկայացրեց Պասկևիչ—Ն. Աշտարակեցի հանգուցահարցի էությունը: «Կոմս Պասկևիչի բնավորության աչքի ընկնող գծերից էր այն, որ նա չէր հանդուրժում իր շրջապատի խելացի մարդկանց, որոնք իրենց ծառայությունը նշանավորում էին սխրանքով, և սիրում էր միայն իրեն վերագրել այն ամենը, ինչը հերոսական էր: Մեկը մյուսի ետևից Կովկասյան բանակից հեռացան լավագույն գեներալներ Երմոլովը, Մադաթովը և Մուրավյովը: Պասկևիչի կողմից խիստ հետապնդվեցին տաղանդավոր գեներալներ Սիպյագինը, Բենկենդորֆը, Կրասովսկին...: Պասկևիչի անբարյացակամ վերաբերմունքին արժանացավ նաև գնդապետ Լազարյանը, որին նա չներեց այն բանի համար, որ Պարսկաստանից հայերի գաղթի հաջողությունը ամբողջովին չվերագրվեց գլխավոր հրամանատարին, այլ նաև այն հարգանքին ու վստահությանը, որ վայելում էր Լազարյանների ընտանիքը հայության շրջանում: Գեներալներ Կրասովսկու, Բենկենդորֆից և Լազարևից հետո հերթը հասավ արքեպիսկոպոս Ներսեսին, որի վրա Պասկևիչը թափեց իր ողջ ատելությունը» (էջ CXXX):

Եզյանը հավաստի վավերագրերով լիովին արդարացնում է Ներսես Աշտարակեցուն և դրան հակառակ, բացահայտում Պասկևիչի արարքները հայ նշանավոր գործչի նկատմամբ: Այս առումով ևս Եզյանի աշխատանքը գնահատելի է: Ցավոք, պետք է ընդգծել, որ Աշտարակեցու գործունեության կարևոր շատ մանրամասներ կամ դուրս են մնացել խորհրդային շրջանի պատմաբանների ուշադրությունից, կամ էլ ներկայացված են խիստ մակերեսային: Մինչդեռ, պետք է ընդգծել, որ դրանք մանրուքներ չեն, և ոչ միայն լրացնում, այլև ամբողջացնում են Ներսես Աշտարակեցու գործունեությունը և ճշգրտում XIX դարի առաջին կեսի հայոց պատմության որոշ հարցեր:

Այնուհանդերձ, բազմաթիվ զեկույցներ, որով կոմս Պասկևիչը ջանում է Կովկասից հեռացնել Ներսես Աշտարակեցուն, կատարեցին իրենց գործը: Կայսրը ցանկանալով վերջ տալ այս հակասությանը և օգտվելով այն բանից, որ Բեսարաբիայի արքեպիսկոպոսը մահացել էր, Ներսեսին առաջարկեց գլխավորել այդ թեմը: Այստեղ էլ մեր պատմագիտական միտքը կարևոր բացթողում է կատարում, երբ Պասկևիչին է վերագրում վաղաժամ հաղթանակը: Իրականում այդպես չէ: Ցարը, մի շարք հանգամանքների, և առաջին հերթին Աշտարակեցու՝ գահին խիստ նվիրվածության բերումով չէր կարող անհետևանք թողնել այս գործը:

Աշտարակեցու կերպարն ամբողջացնելու համար Կ. Եզյանը մեջ է բերում նաև «Русский архив» ամսագրում տպագրված գեներալ Ն. Մուրավ-

յովի հուշերը Ներսես Աշտարակեցու մասին, որում մասնավորապես ասվում էր. «Այնտեղ (Քիշինևում—Հ. Հ.) ես գտա և մեծ բավականությամբ գրկեցի նրան, հայ Ներսեսին. Վստահեցնում՝ իմ հին բարեկամին, մարդ, որն առանձնանում էր իր խելքով և իր վարքով, և տուժել էր Պասկևիչի հետապնդումներից» (էջ CXXXV)։ Որպես հավաստի ապացույց, Ծզյանը քաղվածք է բերում նաև 1890 թ. նույն ամսագրում զետեղված մեկ այլ հոդվածից, որը վերնագրված է «Վորոնցովի և Երմոլովի նամակագրությունից»։ «Պատրիարք Ներսեսը,—գրում է Վորոնցովը Երմոլովին,—ձեռնադրվեց Էջմիածնում 1842 թ. հունիսի 9-ին մարդկային հսկայական հոսանքի ներկայությամբ։ Ես ինքս ցանկանում էի անձնապես ներկա լինել այդ արարողությանը, բայց դա անհնարին էր... Միաժամանակ պետք է ասեմ, որ Ներսեսը և՛ հայերի, և՛ մեզ համար թանկ մարդ է։ ...Դժվար է մտածել, որ այս մարդը 15 տարի շարունակ եղել է մոռացության և անգործության մեջ, երբ նա կարող էր այդ ընթացքում այնքան օգտակար լինել...» (էջ CXXXVI)։ «Սակայն, բարձրագույնի կամքով,—շարունակում է Ծզյանը,—կոմս Պասկևիչի հալածանքներն արքեպիսկոպոսի նկատմամբ դադարեցվեցին և երբ... էջմիածնական պատրիարքարանում աթոռը թափուր դարձավ, 1842 թ. Ներսես Աշտարակեցին ընտրվեց ծայրագույն պատրիարք և Ամենայն հայոց կաթողիկոս» (ն. տ.)։ Կոմս Պասկևիչն այդ ժամանակ արդեն Կովկասում չէր։ Կովկասի նոր կառավարչապետ էր նշանակվել կոմս Վորոնցովը, որը Նովոռոսիյսկի գեներալ-նահանգապետ եղած ժամանակ առիթ էր ունեցել ծանոթանալ Ներսեսի հետ և ըստ արժանվույն էր գնահատում նրան։ Կայսր Նիկոլայը հավանություն տվեց այդ ընտրությանը և Աշտարակեցուն հրավիրեցին Պետերբուրգ։ «Արքունիքում Ներսեսն արժանացավ մեծ ընդունելության կայսեր կողմից և քաջալերված վերադարձավ Էջմիածին և կաթողիկոսությունը վարեց մինչև 1857 թ., մինչև իր բազմարդյուն և անհանգիստ կյանքի վերջը» (ն. տ.)։

Ծզյանն առանձին բաժնով անդրադարձել է նաև արևելահայերի և արևմտահայերի գաղթին։ Իր գրքի վերջին՝ 22-րդ բաժինը նա նվիրել է արևմտահայության հիմնախնդրին, ներկայացրել հայերի ծանր դրությունը, որն հետևել 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքներով։ Այսպիսով գիտնականի ուշադրությունից չեն վրիպել նաև համահայկական խնդիրները՝ Արևմտյան Հայաստանն իր դժվարին ու դրամատիկ կյանքում։

Ծզյանը հանգամանորեն ռուս ընթերցողի առջև փաստում է Ղրիմի և 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմներում հայերի գործուն մասնակցությունը և այն դառն իրողությունը, որին դատապարտվեց հետագայում արևմտահայությունը։ «Հայերը ոչինչ չխնայեցին, որպեսզի իրենց համագործակցությունը և ջանքը նվիրաբերեն ռուսական զորքին և դրանով իսկ արժանանալ տեղական իշխանությունների հալածանքներին»,—գրում է Ծզյանը (էջ CXLI)։ Ներկայացնելով Սան-Ստեֆանոյի հաշտության և Բեռլինի կոնգրեսի Հայկական հարցին վերաբերող հատվածները, նա միաժամանակ, ափսոսանք է հայտնում, որ եթե Սան-Ստեֆանոյում ռուսական դիվանագիտությունը հաղթանակ տարավ և ռուսական զորքերի ներկայությունը կթեթևացներ արևմտահայերի ծանր վիճակը, ապա Բեռլինի կոնգրեսում Հայկական հարցը մտավ փակուղի։ Դրանում պատմաբանը, միանշանակ և որոշակիորեն, մեղադրում է արևմտյան տերություններին, որոնք «հակակշիռ եղան ռուսական արքունիքին» (էջ CXLIII)։

Ծզյանն իր ակնարկը եզրափակում է 1894—96 թթ. հայկական կոտորածներին անդրադառնալով։ Կոտորածները, գրում է նա, «ծանր տպավորություն գործեցին քաղաքակիրթ աշխարհի վրա և ռուսների հասարակական շրջանում՝ արտահայտվելով գիտության և մշակույթի գործիչների ստեղծագործություններում» (էջ CXLII)։

Ինչպես արդեն նշել ենք, Ծզյանի ուսումնասիրության երկրորդ և ոչ պակաս կարևոր մասը կազմում է հայ-ռուսական հարաբերություններին վերաբերող արխիվային փաստաթղթերի և վավերագրերի հրապարակումը, որը

կատարել է գիտական պատշաճ մակարդակով ու մեծ պատասխանատվությամբ։ Փաստական նյութը ներկայացվում է ժամանակագրական կարգով, որով ճշտությամբ պահպանվում է պատմական անցքերի կապը, և դյուրացվում է ցանկացած վավերագրի որոնումը։ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ փաստաթղթերի թարգմանությունները մեծ մասամբ լրիվ ճշտությամբ չեն վերարտադրում վավերագրերի բովանդակությունը, նա հարմար է գտել դրանք ներկայացնել առանց ուղղումների, իսկ որոշ տեքստերի անպարզության դեպքում փակագծերում արել է անհրաժեշտ լրացումներ։ Ընդհանուր թվով Եզյանը ներկայացրել է շուրջ 305 անուն վավերագիր, որոնք պատմագիտական և աղբյուրագիտական առումով անգնահատելի ներդրում են XVIII—XIX դարերի հայ ազատագրական շարժման, հայերի ռուսական կողմնորոշման և, ընդհանրապես, հայոց պատմության այդ վճռորոշ ժամանակաշրջանի ուսումնասիրության խնդրում։

Կարապետ Եզյանի գիրքը ժամանակին լույս տեսավ։ Այն ժամ, երբ դարավերջին թափ էր առնում ցարիզմի գաղութային քաղաքականությունը և ռեակցիոն մամուլում հակահայկական հոդվածներ էին լույս տեսնում, Եզյանի աշխատությունն իր անաչառ վավերագրերով հանդերձ հավուր պատշաճի պատասխան էր այդ կեղծ ու խեղաթյուրված հրապարակումներին։ Զուր չէ, որ այն հրապարակ եկավ նշանավոր պատմաբան և հրապարակախոս Ջանշյանի խմբագրությամբ՝ «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին» ընդարձակ ժողովածուի հրապարակումից մեկ տարի անց և դարձավ նրա տրամաբանական և հավաստող շարունակությունը. «Ժամանակիս պայմանները աչքի առաջ ունենալով,—գրում է Եզյանն իր գրքի մասին,—օգտավետ համարեցի այս հրատարակության համար մի ընդարձակ առաջաբան պատրաստել ռուսաց տերության՝ հայոց ազգի հետ ունեցած հարաբերությանց մասին, սկսած Պետրոս I կայսրից մինչև մեր օրերը։ Առաջաբանում մի առ մի հիշված են մեր ազգի արած ծառայությունքը, կրած զոհաբերությունքը հօգուտ Ռուսաց կայսրության... Ուրախ և մխիթարված կլինեմ, եթե այս աշխատությունս որևէ օգուտ և ազդեցություն ունենա դեպի բարին փոխելու այժմյան տրամադրությունք առ մեր խեղճ ազգն»[15]։

Գիրքը ժամանակին բարձր գնահատականի արժանացավ ռուսական մամուլում։ Այսպես, գրքի հրատարակման հենց նույն տարում «Вестник Европы» ամսագիրը գրեց. «Բոլոր այս փաստաթղթերը վերաբերում են Պետրոս Մեծի ժամանակներին, երբ մեզանում առաջին անգամ դրվեց Հայկական հարցը... Փաստաթղթերին նախորդում է բավականին հետաքրքիր և ընդարձակ պատմական ակնարկ՝ մեր կառավարության և հայ ժողովրդի հարաբերությունների մասին, Պետրոս Մեծից սկսած մինչև այն ծանր իրադարձությունները, որն ապրեց վերջերս հայ ժողովուրդը։ Հայ ժողովրդի հետ Պետրոս Մեծի հարաբերությունները անխզելիորեն կապված են նրա պարսկական արշավանքի հետ, ահա թե ինչու ներկա ժողովածուն կարևոր նշանակություն ունի նաև ռուսաց պատմության այդ ժամանակաշրջանի ուսումնասիրության համար»[16]։ Իսկ «Исторический вестник»-ը 1899 թ. գրել է. «Գրքի հիմքում ընկած են ոչ միայն հրատարակված աղբյուրներն ու ձեռնարկները, այլ հիմնականում դրանք այն փաստաթղթերն են, որոնք մինչ օրս անհայտ էին գիտական աշխարհին»[17]։

1998 թ. լրանում է Եզյանի աշխատության լույս ընծայման հարյուր տարին։ Մեկդարյա այդ հեռավորությունից նույնիսկ նրա աշխատությունը մեզ ներկայանում է թարմ մտքերով ու խորհրդածություններով, որոնք այժմ էլ չեն կորցրել իրենց նշանակությունը և ուղեկցում են հայ ժողովրդին՝ իր բազմադարյա պատմության քառուղիներում։

---

15 Տե՛ս Եզյանի նամակներից.—«Լրաբեր, հաս. գիտ.», 1977, № 6, էջ 102։

16 Տե՛ս «Вестник Европы», 1898, кн. 10, с. 881.

17 Տե՛ս «Исторический вестник», 1899, т. LXXV, с. 305.

К ВОПРОСУ ОЦЕНКИ ИСТОРИОГРАФИЧЕСКОГО НАСЛЕДИЯ К. ЕЗЯНА

А. Ж. ОГАНЕСЯН

Резюме

Карапет Езян (Г. Эзов)—один из выдающихся представителей арменоведения второй половины XIX в. Он был также крупнейшим общественным деятелем своего времени. В историографическом аспекте определенную ценность представляют две работы К. Езяна: «Внутренний быт Древней Армении» и «Сношения Петра Великого с армянским народом». В первой из них, опубликованной в Петербурге в 1859 г., автор рассматривает ряд важных вопросов, относящихся к истории Древней Армении. Езян впервые подробно и обстоятельно представил русскому читателю всеобщую историю Древней Армении. В конце XIX в. начинается наиболее зрелый и плодотворный период арменоведческой деятельности К. Езяна. Опираясь на богатые архивные материалы, он создает качественно новую работу. В 1898 г. в Петербурге было опубликовано исследование К. Езяна «Сношения Петра Великого с армянским народом». В статье обстоятельно рассмотрены представляющие важное значение проблемы и размышления автора. Работы К. Езяна и поныне не потеряли своей актуальности и значимости.